ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

«13» «Օգոստոսի» 2026 թվական №265-Լ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 422-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածը և վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 745-Լ որոշման հավելվածի 18-րդ կետի 20-րդ ենթակետը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Շրջակա միջավայրի նախարարի 2025 թվականի հոկտեմբերի 29-ի «Շրջակա միջավայրի նախարարության հիմնական մասնագիտական և աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների, էկոպարեկային ծառայության, համակարգի պետական ոչ առևտրային կազմակերպությունների, փակ բաժնետիրական ընկերության և պետական հիմնարկի գործունեության համակարգումը սահմանելու և շրջակա միջավայրի նախարարի 2025 թվականի մարտի 14-ի N88-Լ հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 422-Լ հրամանում (այսուհետ՝ Հրաման) կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունը.

1) Հրամանի 1-ին կետի 1-ին ենթակետը լրացնել նոր «զ», «է» և «ը» պարբերություններով.

«զ. «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն,

է. «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկ,

ը. «Զվարթնոց ավիաօդերևութաբանական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերություն,»:

2) Հրամանի 1-ին կետի 4-րդ ենթակետում «Վահե Դավթյան» բառերը փոխարինել «Հայկ Առաքելյան» բառերով:

3) Ուժը կորցրած ճանաչել Հրամանի 1-ին կետի 4-րդ ենթակետի «դ», «ե» և «զ» պարբերությունները:

Հ.ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

8/13/2026

X

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Signed by: MATEVOSYAN HAMBARDZUM 2809920230

Երևան